



2. ԹԱԳԱՎՈՐԻ ՊԶՏԻԿ ՏՂԱՆ

Կէղնի, չէղնի մե թագավորըմ կէղնի: Թագավոր ունի իրեք տղա: Թագավոր իրեք տղայի ժամանակն էկիր է ամուսնացնելու:

Իրեն ժողովուրթը թագավորին կառաջարկին՝ պետք է մենք քու իրեք տղեն լի ամուսնացուք, օր ուրախութեն էնիք:

Թագավոր ըսավ ընուց, որ մեք պիտի հարցուք տղոցմեն. գուցե իրենց հարմարին ըստեխ ախշիկ չի կարողանան գտնալ:

Բոլոր ընդունեցին թագավորի խոսք ու կանչին բերեցին թագավորի իրեք տղին:

Թագավոր ըսավ տղոց.— էկեք, մեք ձեզի ամուսնացուք իրիքտ ի միասին:

Անուք ըսեցին.— Մեր պապն առաջ նասիաթ մ' էրիր մեզի՝ աշխարքիս էրես դուք օր կամուսնանաք՝ ձեր օտքով օլորտեք, ձեր աչքով տեսեք, ձեր լեզվով խոսացեք, նորեն ամուսնացեք, օր մարթ ձեզի պատճառ չըլլա:

Թագավոր ու իրեն ժողովուրթ սիրով ընդունեցին ըսոնց խոսքեր:

Թագավոր էլավ, ավավ ձի, զենք, ըզգեստ, դրեց ճանապարհի:

Շատ երկար շտեկեց, ուրենց ճանապարհներ գատվան իրարմեն:

Մեկը գնաց Հնդկաստան, մեկը գնաց Արաբստան, մյուսը գնաց Զինաստան:

Երկ մեծ եխպարը ելավ Հնդկաստան, անժանոթ երկրի մեջ էր: Ոչ մեկ մարթ իրեն չէր ճանաչեր, զանազան կերպով շարշարանքներ կիտային իրեն: Հնդկաստանի քաղաքի մեջ մի դամրչի կեր, իրեն անուն Սեփան էր: Երկ նա մարթ գնաց էղավ աչկերտ քով, մի քանի օրեն հետո սկսեց աշխատել: Կիրակի օրը իրեն ուսթային ըսավ.— Ուսթա, ըսօր

ինձի թող հոս, մի քանի հատ տանակ պիտի շինիմ ինձի համար:

Ուսթեն ըսավ.— Այո, կայնե մի քանի հատ տանակ շինե քեզի, ծախե:

Ոչ մեկ սարթ մի չէր իմաներ, թե այսինչ թագավորի տղան է, այս-քան ուժ ունի: Երփ դանակ սկսեց շինել, շաքուշ օր բիրեց վիրեն, իրեն ուժը միտք ընկավ, ուսթա Սեփանի սալն էղավ իրեք կտոր, երփ օր մե դաբբում զարկեց: Բայց չկարողացավ Հնդկաստանի ձևով շինել էդ սալըն: Իրեն հայրենիքի ձևին էտ սալը շինեց: Երփ առավոտուն ուսթա Սեփան էկավ, տեսավ սալըն ու զարմացավ, որ Հնդկաստանի ձևին շինված չէր: Թագավորի տղեն իրեն երկրի ձևին շինել էր, իրեն երկրի թիվը վրան տրված: Ուսթա Սեփան ներողութուն խնդրեց թագավորի տղայից ու խո-նարհվավ:

Ուսթան ըսավ.— Ի՞նչ իս էկիր հոս, մեր Հնդկաստանի հողին մեջ: Ասե օրես քու խոսքըտ պիտի կատարիմ:

Նա մարթ նոր պարզ խոսաց, թե.— Ես էկիր իմ Հնդկաստանի թա-գավորին ախչիկը տեսնելու:

— Դու օր էկար, ինչի՞ ըսկզբեն չըսեցիր: Ես հիմա շատոնց կատա-րիր ենք: Աստծուն առաջ իմ պարտք էղնի, օրես մի քանի օրվան մեջ վերջացնիմ էտ խնդիր:

էլավ մի լավ սեղա մի սարքեց, թագավորի տեսության դրկեց: Թա-գավոր իսկույն ընթոնեց ըտուր պատիւ: Ընուր խնդիր վերջացավ, տղան հտ էկավ: էտ ախչիկ ուզեց իրեն համար, նշան տրավ, հտ տարցավ:

Միշի եղբար զնաց Արաբստան: Իրեք տարի ծառայեց մի մարթու քով: Իրենմեն հարցուցեր են՝ հայր-մայր ունի՞ս:

Ըսավ.— Ո՛չ, ես ո՛չ հայր ունիմ, ո՛չ մայր:

Իրեն աղան ըսավ.— Այ զավակս ի, ոչ հայր ունիս, ոչ մայր, խոշ տուն քարեն ծնված չի՞ս: Ես հիմա պիտի ելլամ, քեզ խուզարկեմ:

Երփ ելավ խուզարկելուն, իրեն անուն և իրեն մորը մոտը գրված: Իրեն աղան իսկույն խոնարավ տղային:— Դուն այսինչ թագավորին տղան իս, իրեք տարի իմ մոտ ծառա: Ես, ոչ մի մարթ չիմացավ: Խնթրեր իմք օր քու ուլածդ ինչ է, ինձ ըսե:

Ըսավ.— Իմ ուլածս ըն է, օր օտքովս էկիր իմ, օր աչքովս տեսնամ, ուզիմ:

Նոր տարավ, թագավորին ախչիկ ցուց տվավ մանչուն, մանչ ախչիկ սիրահարվան մեկ մեկի վրան: Թագավորին էտ մարթ խաբար տվավ, թե՝ այսինչ թագավորին տղան քու ախչիկ պիտի ուզե:

Նա սրտով ընդունեց էտ խոսքն: Նա տղեն էլավ հտ եկավ:

Դառնաք թագավորի պզտիկ տղայի վրան:

Նա գնաց Չինաստան: Ավուր մեկ թագավորի սարայի դռներն կնցներ: Տեսավ մի պահապան մի կանաժ էր էտտեխ: Ըսավ.— Եթապար, ի՞նչ պահապանութեն կէնիս էստեխ: Ո՞վ կա բանտարկյալ:

Պահապան ըսավ տղին.— Աս էն մարթն է, որ թագավորի ախշկա վերեն սավա էղեր է:

Ըսավ.— Խընթրիմ տու ըտ մարթուն ինձի ցուց տաք, օր ես տեսնիմ: Երբի գնաց, տեսավ էտ մարթուն, հացը գլխի վերե դաստայով կապված դրած թագավորի ախշիկն աիմաց սենյակ նստած:

Էտ մարթը խընթրվավ թագավորի տղից.— Այ եխապար, կխընթրիմ քեզնից, մե պատառւմ հաց, մե գտալըմ մածուն տուր ուտիմ, սոված իմ:

Տղան բռնեց մի քիչ հաց տվավ, մի գտալըմ մածուն: Թագավորին ախշիկ ճվալեն վազեց, թե՛ մի տա: Նա տվավ հացն բռնավորին:

Հաց ուտելեն վերջ, իսկուչն կտրեց իրեն չըվաններ, վազեց տեպի թագավորի ախշիկ: Երկուսի սեր միասին: Թագավորի կինըն էկավ տեսավ: Ըսավ.— Ըսի ո՞վ հարձըկեց:

Թագավորի տղան ըսավ.— Ես հարձըկեցի:

Թագավորի տղեն ինչ էրեց, չկարողացավ օր էտ Ջանփոլատին սպաներ: Հոս կսպանվեր, հոն կսաղներ: Թագավորի տղեն ինք մատնի շինողին աշկերտ եղեր էր: Ըսավ թագավորի ախշկան.— Դու Ջանփոլատի սիրահարն իս: Ես լավ մատնիկներ կշինիմ, որ քեզի մատնիկ շինիմ:

Թագավորի ախշիկն ալ ընդունեց ըտ խոսք: Իրիկուն Ջանփոլատ էկավ տուն: Թագավորի ախշիկ էնքան տրտում-տխուր էր: Լավ մի բարկացաւ վրան.— Ինչի՞ համար տրտում իս:

Նա ըսավ.— Ինձի մատնիկըմ շինե:

— Ո՞վ քեզի ըսավ, իմ սրտով մատնիկ պիտի շինե:

— Այսինչ թագավորի հողեն մե տղա մ' է, ուսթա է, կշինե:

Ըսավ.— Առավոտուն տուր շինել քեզի:

Առավոտուն գնաց, տղուն ըսավ.— Ինձ լավ մե մատնիկ շինե, ինչ օր աղիս՝ կիտամ:

Տղան մատնիկ շինեց, բերեց:

— Գի՞ն, — ըսավ, — մատնիկի գին ի՞նչ է:

Տղան ըսավ.— Ջանփոլատի հոգին վե՞ր տեխն է, օր ես մատնիկ տամ քեզի:

Ըսավ, — Սպասե մինչև իրիկուն, Ջանփոլատ գա, հարցում իրնե, քեզի ըսեմ:

Իրիկուն Ջանփոլատ էկավ, տեսավ օր կնիկ էնքան է լացեր, օր աշքեր ուռիւր է: Ըսավ.— Ինչի՞ ես լացիր:

— Ես չի լամ, ո՞վ իլա, — ըսավ, — օր իմ հայր թագավոր էր աշխարքիս էրես, չկարողացավ քու հոգին գտներ ի՞նչ տեխն էր:

Ըսավ.— Իմ հոգին դուրսի մեջն է։ Վաղ մատնիկ առ, էկո։

Մնաց առավոտուն, տղան մատնիկ բերեց։

Ըսավ.— Կըսե դուրսի մեջն է։

Տղեն խնդաց, ըսեց թագավորին ախչկան.— էնպես խնդանելու պաճ կըսիս օր, աշխարհս մեջ չէղիբ է։ Հոգին էլ դուրսի մեջ կէղնի՞։ Թե չէ՝ մատնիկ չեմ տար։

Ըսավ.— Ըսպասե, ես իրիկուն գենա պիտի հարցնիմ։

Իրիկուն Ջանփուլատ էկավ, ըսավ.— Ինչի՞ էսօր տրտում իս։

Թագավորի ախչիկ ըսավ.— Մե կնիկ մ' ու մարթ մ' օր աստված կստեղծե, իրեն հողն ու ջուր մեկտեխ է։ Դու իմ մեջտեխեն ու քուկդ խոսքեր կպահիս։

— է,— ըսավ,— քեզնից ի՞նչ իմ պահիր։ Մեկ բիւրուլ տեսա՞ր ծառին վրա, իմ հոգիս էտ բիւրուլի փորն է։

Ախչիկն ըսավ Ջանփուլատին.— Մարդու հոգին էլ բիւրուլի փոր կէղնի՞ միթե։

— Բիւրուլի փորու մեջն է իմ հոգիս։ Սանդուխ մի կա բիւրուլի փորու մեջ, սանդուխի մեջ մի լորժմ կա, լորի փորին մեջը մի եղնիկի կոտորժմ կա, էտ կոտորժի մեջ իմ հոգին է, իրեք հատ ճնճուղ է։ Եթե մի հատ մնա սաղ, ես դենա աշխարհս վրա սաղ կմնամ։

Թագավորին ախչիկ նոր հավատաց, հանգիստ քնավ։ Առավոտուն ալսինչ թագավորին տղան էկավ։ Ըսավ.— Տուր մատնիկս։

Ըսավ.— Ջանփուլատի հոգին ըսե։

Նույն խոսքեր թագավորի տղին պատմեց։

Թաղավորի տղեն ըսավ.— Դու էտ բիւրուլ բռնե, բեր տուր ինձի, օր ես մատնիկ իտամ քեզի։

Իրկուն Ջանփուլատ էկավ տուն։ Կնիկ ըսավ.— Խընթրիմ բիւրուլ իտաս ինձիկ։

Ջանփուլատ քիչըմ բարկացավ կնկան վրեն, բռնեց բիւրուլ, տվեց կնկան։

Առավոտուն լույս ծագեց։ Բիւրուլը կնիկ տվավ տղին։ Կընկա սերը իսկույն փաթթեց տղին։

Տղան բիւրուլի գլուխ կտրեց, բիւրուլի փորը ճղեց։ Ջանփուլատ ճանապարհին դողցուց, թեզըմ վազեց օր իր ճընճըղկներ շմորթին, ինք սախ մնա։

Ոսկի սնդուկ հանեց բիւրուլի փորեն։ Սնդուկ կտրեց, լորը հանեց։ Ջանփուլատ ճանապարհ սաստիկ հիվընդցավ։ Տղան լոր մորթեց, փորեն հանեց եղնիկի կտտոջ։ Ջանփուլատ չի կարող ճանապարհ քալել։ Ինքն իրեն մտքին կըսեր. «Թեզըմ հասնիմ, իմ ճընճըղկներ շմորթին, ես սախ մնամ»։

Տղան եղնիկի կոտող բացեց, մե ճընճղուկը մորթեց: Երեք հարյուր քայլեն Ջանփուլատ հեռուն էր տնեն: Մյուս ճընճղուկն ալ մորթեց, Ջանփուլատ հիսուն քայլի վրա դետին ընկավ ու ախ կանչեց: «Մեկ ճընճղուկ է մնացիր, օր ես իմ հողիս տամ»:

Թագավորի ախլիկ խնթրեց էտ թագավորի տղայից. «Ես սպանիմ էն ճընճղուկ»:

Շատ հեռու չէղավ էտ խոսքն, ճընճղուկ թռավ ձեռքերեն, ելավ պատուհան, նստավ:—Թու, թու, թու,— ըսավ,— ես նոր պիտի էղնիմ հողի, Ջանփուլատ առողջացում:

Ջանփուլատ հասավ տուն մոտ: Թագավորի ախլիկ էնքան էր սեր բռնի թագավորի տղին օր, մի ավել զարկեց, ճընճղուկը սպանեց: Իսկուն Ջանփուլատ մեռավ: Ջանփուլատ տարան թաղեցին:

Թագավոր ըսավ.— Ես իմ ախլիկ կիտամ էտ թագավորի տղին:

Թագավորի տղեն ըսավ.— Ես կէրթամ իմ հայրենիքս:

Թագավոր ըսավ.— Իմ ախլիկս քեզի կին է, տար հետտ:

Թագավորի տղեն ըսավ.— Իմ հայրըս կիգա, կրերե իմ կինըս:

Ու ինք ճանապարհ ինկավ ու գնաց: Թագավորի էրկու տղեն օր գացիր են շնդկաստան ու Արաքստան, էկած են էտ ճանապարհին, ուր զատված են իրարեն, ամեկ գացեր էր մեկ թագավորի հող:

Երեք ախպեր հոտ միացան: Երեքն էլ գացին իրենց հայրենիք:

Մի ծեր մի ճանապարհին նստած էր: Էտ ծեր ըսավ թե.— Պզտիկ ախբեր, քու կնիկ տանելու ժամանակ, վիր տեխն օր քաղաքն դուրս կիլնան, էնտեխ թող իրենց շաղըրներ զարկին, էնտից օր կիգան, շաղըրներ հինգ ավուր ճանապարհ ըստին զարկին, իրեն տակի ձին հ'ուր օր կանավ՝ իրեն շաղըրներ հոն թող զարկին: Չինաստանի թագավորի քաղքեն օր ելան, էն հ'ախբրի վրա թող շարկին, իգան:

Տղան հարցուց.— Պատճառն ի՞նչ է:

Ծերունին ըսավ.— Իմ պատվիրանքն այս է:

Մնաս բարով էրեցին, գնացին իրենց հայրենիք:

Հարսնից պատրաստութեն տեսան, էկան:

Հասան էն ծերունու քով: Ինչ խոսք օր ծերունին ըսեր էր տղոց, նույն խոսք ըսավ տղոց հորըն:

Տղի հայր ըսավ.— Լավ կէղնի:

Աստիեն գնացին հ'ախբրի վրա, շաղըրներ զարկին, անգիեն էկան, տղի հայր ըսավ.— Իդա հ'ախբրեն անցնիք հինգ ավուր ճանապարհ ջուր չրկա: Ամենեն լավն է օր մեք հոս թափիք մեր շաղըրներ, հոս զարկինք:

Չաղըրներ հոն զարկին: Հ'իրկուն քնան: Առավոտուն լուս բացվավ, տեսան օր էտքան ժողովուրթի շորս կողմն ուշափը փաթթեր է:

Ուշափը թագավորին բռնաց ու ըսավ.— Ել, առ էրկու մեծ հարս-
ներդ ու գնա: Բայց պզտիկին չիմ հտար:

Ելավ, առավ իրեն էրկու մեծ հարս ու գնաց, պզտիկին չտվավ:

Հինգ ավուր ճանապարհ էկան: Մերունին ըսավ.— Հ'ու՛ր է ձեր մուս
հարս:

Իրենք ըսին ծերունիին.— Մենք ախալվաք:

Մերունին ըսավ.— Դուք էտ տղին զանազան կերպով չարչարանք
կուտաք:

Մերունից մնաս բարով ըսեցին, իրենց ճանապարհը շարունակեցին,
գացին: Թագավոր հարսներ տարավ քաղաքին մոտ:

Պզտիկ տղան հեռագիտակ դրեց աչքին, նայեց իրեն նշանածը
հետ չէ:

Ախպըրտանուն ըսավ, նրանք լա նայեցին, չկա: Ըսեցին.— Ուրեմն
էտ ծերունու խոսքը չկատարեցին, էտ բան պատահավ:

Ախպրտանք մեկ մեկու հետ թորա էրեցին աստծուն առաջ, պզտի
ախպոր ըսեցին.— Մինչև քու կինըտ չի գա, մենք չպիտի պսակվիք:

էտ պայման իրենց մեջ մնաց: Թագավոր հարսներ բերեց պալատին
մոտ:

Տղեկներ ըսեցին.— Մեք չըք ուզի իգա տան մեջ, մինչև մեր պրզ-
տիկ ախպոր կինը չիգա:

Թագավոր չաղըրների զարկեց, հարսներ մեջ դրեց, պզտիկ տղան
հորը եղելություն հասկացավ, ինչ է պատահի իրեն գլուխ: Կանչեց
աստված, հ'ընկավ ճանապարհին, շատ լմնաց հասավ ծերունուն:

Մերն ըսավ տղին.— Հ'ու՛ր պիտի էրթաս:

Ըսավ.— Պիտի էրթամ կինըս բերելու:

Ըսավ.— Կինըտ ի ուշափ արքելք էրիւր է, չի տա: Դու պիտի էրթաս
Չինաստանի թագավորի հող, Թորոս անվոր դամբըլի մի կա: Էնդոր քով
պիտի շինես մի սաջե սալըմ: Ուշափի պահանջն այս է, օր բերիս տաս
ուշափին, նոր քու կնիկ տա:

Մնաս բարով էրեց, ճանապարհին ընկավ: Հասավ Չինաստանի թա-
գավորի հող: Թորոս անվոր դամբըլին փնդռեց: Գնաց ծառայեց Թորոսին
քով. մե իրեք-չորս ամիսըմ: Ըսավ.— Ուստա Թորոս, ի՞նչ կէղներ օր թը
էսօր կիրակի է, թողիս իս մնամ տուբան, կնիկ մարթոց համար էրկու-
իրեք բիլազուկ շինիմ:

Ուսթա Թորոս սիրով ընդունեց տղի խոսք: Ուսթա Թորոսի ուժն աշ-
խարքիս էրես մեկ հատ էր, էնքան ուժով էր:

Ուսթա Թորոսի չաքուլըն ծանգրութի չափ տասվերկու հոխանոց
էր: Տղան երի օր առավ իրեն ձեռք, սաջե սալըմ շինեց, սալեն պրծավ,
էտ տտսվերկու հոխանոց չաքուլ առավ իրեն ձեռք, իր ուժ փորձեց:

Ինչպես օր զարկավ սալին, սալը եղավ տասվերկու կտոր: Սկսեց սալը շինել, բայց ուսթա Թորոսեն դհա ավելի լավ շինեց: Իրեն հայրենիքի թիվը տրեց վրան:

Երկուշաբթի առավոտ ուսթա Թորոս էկավ տուքան: Հանկարծակի աչքն առավ սալ: Զարմացավ, ըսավ.— Ո՞վ է շինեը էս սալն ու թիվ գրեը վրան: Իմ շինած սալն է, ուրիշի դրած թիվն է վրան: Ինձանից լավ շինող Չինաստանի հողի մեշ չի գտնվիր, աս թիվ տնող ինձանից լավ է շինեը:

Տղեն ինք խոստովանավ, ըսավ.— Ես իմ շինող էտ սալին ու իր թիվին:

Ուսթա Թորոս ըսավ.— Ուշե, ես քեզ իաամ:

Նա ըսավ.— Ես ոչ մի պան չիմ ուզիր:

Մինակ մի սաշե սալ ուզեց ուսթա Թորոսեն: Նա ըսավ.— Շատ հանգիստ բան է: Այսօր կշինիմ, արի տար:

Թագավորի տղան ըսավ.— Սալը իս շինիր իմ, պատրաստ է, հրաման տուր, տանիմ:

Ուսթան սիրով ընդունեց ու սալ տվավ, առավ գնաց:

Թագավորի տղան հասավ ուշափին մոտ: Սալը իսկույն հանձնեց ուշափի ձեռք:

Ուշափ բանցը ձայնով բռռաց, դեհսնուն.— Մի լավ օջախըմ սարքեցեք:

Ուշափ ճվաց.— Արար, էկե հոս:

Արաբ էկավ, պատրաստ կայնավ:

Ըսավ.— Ի՞նչ կուշիս:

Ուշափը պատասխանեց արաբին.— Երթաս, քու շալակով փետ բիրիս անտառեն:

Արաբը գնաց, անտառի կեսը շալկեց, բերեց: Իսկույն վառեցին, սաշը արեցին վրան, սաշը լավ կարմրավ:

Ուշափ ըսավ.— Թագավորի ախչկան վարեն բացեք, նստեցուցեք սաշի վրան:

Իսկուն ախչիկը ծնավ մի երեխա մի, որ Զանփուլատի հոգին ունեը:

Ուշափը ճվաց.— Արաբ,— ըսավ,— այս ախչկա երեխեն կուլ տաս:

Արաբը երեխեն կուլ տվավ: Թագավորի ախչիկ հանձնեց տղին: Յոթ գլան էլ հետ տղային, արաբն ալ իրենց հետ միասին գնացին ախչկա հոր տուն: Ախչկա հայրն ելավ, բան կպատրաստեը, որ իրենց ուտելու համար կանչեը:

Կանչեց ճաշին, երփ արաբ էկավ, ամբողջ թաքախներ մեկ անքամեն կուլ տվավ: Չինաստանի Թագավոր զարմացավ էտ արաբի վրան ու դեմիտանում:

Թագավորն իր ախիկ հանձնեց տղային, առավ դեհսնու հետ, Գնաց
դէպի՝ իրենց տուն։

Դնաց ծերունու մոտըն։ Ծերունին ըսավ.— Մի տանջանքի տեխ
քեզի էրկուս տվին։

Որքի հասավ քաղաքին մոտ, իրեն ախպարներ հռադիտակով նայե-
ցին՝ իրենց փոքր եխպայրը իրեն կինը բերեց։

Նորեն ուրախացան, իրեքը մեկտեխ հարսնիք սկսեցին ու պսակվան։
Իրենք հասան իրենց մուրադին, դու լա հասնիս քու մուրադին։

